ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

ք. Երևան **18.01.2024թ.**

Որոշում

«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21»**

Մասնակից՝ **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 00521878, գործունեության հասցե՝ ք. Երևան, Նոր Արեշ 41փ., 111տ./

1. «ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշում

ՀՀ դատախազության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների, IP հեռախոսների և տեսահսկողության համակարգի ձեռքբերման նպատակով 01.11.2023թ. հայտարարվել է «ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն՝ հակադարձ աճուրդի արդյունքում 4-րդ և 7-րդ չափաբաժիններով ճանաչվելով ընտրված մասնակից:

07.12.2023թ.-ին «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հետ կնքվել է ապրանքների մատակարարման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, պայմանագրի N 2 հավելվածով՝ Մատակարարման ժամանակացույցով սահմանված ծավալով, ժամկետում և հասցեներով, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ էականորեն խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

2. Հիմնավորում և եզրահանգում

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերը՝ ՀՀ դատախազությունը, որպես գնորդ, իրավունք ունի ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, ինչպես նաև միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն 10.01.2024թ-ին ՀՀ դատախազությունը միակողմանի լուծել է «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հետ 07.12.2023թ.-ին կնքված N ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21-2 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիրը, որի մասին ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ նույն օրը ուղարկելով մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն՝ չմատակարարելով պայմանագրով նախատեսված ապրանքները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մ. ԱՓՐԻԿՅԱՆ